

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

03.08. 2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Ա.Բեջանյանը, Վ.Ջաղինյանը, Ա.Մատինյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Դեմիրճյանը, Գ.Բաղդասարյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
- Ռ.Մարգարյանը -մարզպետարանի փորձագետ

Օրակարգում`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ` Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար` Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ղ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և վերահսկողություն սահմանել մարզի համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանները կատարելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին և փորձագետ Ռ.Մարգարյանին`

1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն 2019թ. սուրվենցիոն ծրագրերի կատարման ընթացքի և ֆինանսավորման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին`

Ուսումնասիրել բոլոր շինարարական աշխատանքները, գույքագրել ու ֆիքսել թերությունները և տալ կոնկրետ ժամկետներ դրանց վերացման նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին`

Երկօրյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ մարզում գործող, նոր կառուցվող և շարժական սպանդանոցների վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին՝

ա/ Երկշաբաթյա պարբերականությամբ ներկայացնել ամբողջական տեղեկատվություն հողամասերի օտարումների և վարձակալության տրամադրման վերաբերյալ.

բ/ 5-օրյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն տեսչական մարմինների հետ համագործակցության վերաբերյալ:

6. Հ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝ 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն.

ա/ Քաղաքային այգու վերակառուցման գործընթացի վերաբերյալ.

բ/ «Նյու-Իդա» կազմակերպության հետ համագործակցության վերաբերյալ.

գ/ Լոռու մարզի և օտարերկրյա այլ պետությունների հետ համագործակցության ընթացքի և արտաքին կապերի վերահաստատման վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժ/պ Լ.Վարդանյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ Շարլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի թեքահարթակի կառուցման վերաբերյալ:

8/6/2020

X 

ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԴՈՒԿԱՍՅԱՆ